

Երբ գործատուն ու մասնագետը հանդիպում են

ԵՐԵՎԱՆ, 25.01.2018 Թ. – Աշխատաշուկայի վերլուծություն տրամադրելուց մինչև ՔՈԱՖՍՄԱՐԹ կենտրոնում դասընթացների անցկացում. Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) և staff.am կարիերայի օնլայն հարթակը համագործակցության հուշագիր են ստորագրել:

Հիմնական նպատակը դաշտում առկա մասնագիտական ռեսուրսները ճիշտ գնահատելն է, մենթորական խորհրդատվության տրամադրումը գյուղաբնակ երիտասարդներին ու ՔՈԱՖՍՄԱՐԹ նախաձեռնության իրագործման համար երկրի լավագույն մասնագետների ներգրավումը staff.am կարիերայի օնլայն հարթակի միջոցով:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի մասնագիտական կողմնորոշման ծրագիրը մեկնարկից ի վեր՝ 2013 թվականից, ներգրավել է Հայաստանի 4 մարզերի՝ Արմավիրի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի 27 դպրոցի շուրջ 3000 երեխայի: Ծրագրի ընթացքում միշտ կարևոր տեղ է հատկացվել աշխատաշուկայի մասին իրատեսական պատկերացումներ ձևավորելուն: Այժմ staff.am-ի հետ համագործակցությամբ ծրագիրը կհամալրվի աշխատաշուկայի վերլուծությամբ:

«Իրենց ապագա մասնագիտության ընտրության և շուկայի պահանջարկի համադրության վերլուծությունը կարևոր քայլ է գյուղաբնակ երեխաների համար՝ կանխորոշելու իրենց անելիքները, ակնկալիքները, զարգացումը և ինքնիրացումը: Նման համագործակցությունը հնարավորություն է տալիս երեխային ու ծնողին լիարժեք պատկերացնելու աշխատաշուկան ու մասնագիտական հեռանկարները և կատարելու լավագույն ընտրություն»,- նկատեց Հայաստանի մանուկներ հիմնադրամի գործադիր տնօրենի պաշտոնակատար **Իննեսա Գրիգորյանը**:

Իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի ռազմավարության շրջանակներում staff.am-ը նախատեսում է համագործակցել Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ՝ կիրառելով իր փորձը, միջոցներն ու կապերը ինչպես գործատուների, այնպես էլ ոլորտի մասնագետների հետ, դրանով իսկ գործուն մասնակցություն ունենալով Հիմնադրամի մասնագիտական կողմնորոշման, ՍՄԱՐԹ նախաձեռնության և այլ ծրագրերում:

«Շատ ենք կարևորում staff.am-ի ներգրավվածությունը համայնքային զարգացման տարբեր ծրագրերում և արդեն առիթ ենք ունեցել մասնակցելու մի շարք կարճաժամկետ նախագծերի ՀՀ տարբեր մարզերում: Ի վերջո, մշակել ենք Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր ծրագիրը, և անչափ ոգևորված ենք, որ պատիվ ունենք այն



Հայաստանի մանուկներ հիմնադրամ

իրականացնելու Հայաստանի մանուկներ հիմնադրամի նման հեղինակավոր կազմակերպության հետ: Մասնավորապես, ծրագրում ներգրավելու ենք ինչպես staff.am հարթակի վերլուծական ներուժը, այնպես էլ ապահովելու ենք մեր թիմի և, ինչո՞ւ չէ, նաև մեր օգտատերերի ակտիվ մասնակցությունը, ովքեր, հավատացած ենք, սիրով իրենց ներդրումը կունենան ՔՈԱՖՍՄԱՐԹ նախաձեռնության մեջ»,- ասաց staff.am կարիերայի հարթակի համահիմնադիր Լուիզա Ավետիսյանը:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) մասին

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Պեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 67,000 բնակիչները:

2015 թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

staff.am հարթակի մասին

staff.am-ը կարիերայի առաջատար հարթակ է Հայաստանում, որն ապահովում է գործատու ընկերությունների և աշխատանք փնտրողների անմիջական կապը, և առաջարկում է խելացի գործիքներ՝ աշխատանք և աշխատակիցներ փնտրելու գործընթացը դարձնելով ավելի արդյունավետ, ներմուծելով նոր մշակույթ: Հարթակը թողարկվել է 2016թ նոյեմբեր ամսին և ակտիվ գործունեություն է ծավալել ինչպես մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ), այնպես էլ ռեքրութմենթի ոլորտներում: Հաջողությամբ ընդլայնել է ազդեցության օղակը, ունենալով մեկ նպատակ՝ դրական փոփոխություն բերել իր գործունեության բոլոր ասպարեզներում:

2017թ-ի հոկտեմբերին առաջին անգամ հանրությանը ներկայացվեց «ՀՀ աշխատաշուկայի վիճակագրական վերլուծությունը», որում ներառված էր ոլորտային տարբեր տիպի հետազոտություններ հիմնված staff.am-ի կողմից ընթացիկ մշակվող տվյալների վրա: Այս նախաձեռնությունը լինելու է շարունակական՝ ներգրավելով հետազոտության նոր ոլորտներ: